

Նելլի Վարդանյան
ԵՊՀ փիլիսոփայության և հոգեբանության ֆակուլտետ,
սոցիալական հոգեբանության ամբիոն, մագ. 1-ին կուրս
Գիտ. դեկ. ասիստ. Ի. Ղազարյան

ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՓԱՍՏԻ ԸՆԿԱՍՄԱՆ ԱՌԱՆՁՆԱԴՐՄԱՆ ԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԴՊՐՈՑԱԿԱՆ ՏԱՐԻՔՈՒՄ

Հայոց մեծ եղեռնը համարվեց XX դարի առաջին մեծամասշտաբ ցեղասպանությունը, որն անջնջելի հետք թողեց ոչ միայն վերապրածների, այլև նրանց հաջորդող բոլոր սերունդների վրա: Այն արտացոլվել է պատմական հիշողության մեջ և փոխանցվել մեզ. դրա հետևանքները կրում է հայ ժողովուրդը ընդունված «Չոփի հոգեբանություն» տերմինի ներքո:

Ցեղասպանության կոնվենցիայի երկրորդ հոդվածին համաձայն՝ այն բնութագրվում է, որպես համաշխարհային հանցանք և արտահայտվում գործողություններով՝ ուղղված որևէ կրոնական, էթնիկական, ռասսայական խմբի ամբողջական կամ մասնակի ոչնչացմանը: Ցեղասպանությունն ունի երկու փուլ. ճնշված խմբի ազգային մոդելի ոչնչացում և ճնշողի ազգային մոդելի հարկադրում: Այն առանձնանում է ոչ միայն զոհերի մեծ քանակով, այլև հանցագործների ահռելի թվով¹: Չնայած, որ ցեղասպանությունը համարվում է մեծագույն հանցագործություն՝ հակասական մարդկային բոլոր նորմերին, այնուամենայնիվ հաճախ այն փորձել են բնութագրել, որպես անառողջ անծանց արարք՝ բացատրելով մարդկանց զանգվածային հոգեկան խանգարումներով, ուղեղի մթազնաժողովամբ: Սակայն այս տեսակետն արմատականորեն ճիշտ չի կարող լինել. մասնակիցների մեծամասնությունը հոգեպես առողջ մարդիկ են²: Ի. Ստաուբը, խոսելով այս երևույթի մասին կիրառել է «Ծանր ժամանակներ» տերմինը, որն, իր կարծիքով, միշտ նախորդում է ցեղասպանությանը: Այսինքն՝ ցեղասպանությունն իրականացնող ժողովրդի մոտ առկա է դեպրեսիվ, թշնամիներով շրջապատված լինելու զգացում, ինչպես նաև իր պետության շահերը պաշտպանելու միտում: Ըստ Ի. Ստաուբի, հենց այս զգացողությունների համախումբը կարող է լինել զանգվածային սպանությունների և ցեղասպանության իրագործման համար կարևորագույն նախապայման: «Ծանր ժամանակների» տարիներին հասարակության մեջ կուտակվում է

¹ Տե՛ս <http://www.genocide-museum.am/arm/un.php>

² Տե՛ս Գոջման Ա. Բ., Շեցտոպալ Ե. Բ., *Политическая психология*, Ростов-на-Дону, 1996.

ագրեսիա և ատելություն, որը ելք է գտնում ցեղասպանության ակտերում¹: Այդ ատելությունը երկար դաստիարակվում և զարգանում է սկսած վաղ տարիքից, իսկ նրա արմատները թաքնված են Թուրքիայում տարվող քաղաքականության մեջ և արտացոլվում են դպրոցական դասագրքերում:

Հասկանալով, որ ցեղասպանության հետևանքներն անհետ չէին կարող վերանալ՝ դիտարկենք՝ ինչ ուղի է անցել այն և ինչպես է փոխանցվել հաջորդ սերունդներին պատմական հիշողությամբ:

19-րդ դարից գիտնականներն ու քաղաքական գործիչները սկսեցին ընդունել ազգի անցյալի և ներկայի մեջ առկա կապերի կարևորությունը, որն էլ հանդիսացավ ազգայնականության աճի ու ազգակառուցման ձևավորման հիմքը: Ըստ Էնթոնի Սմիթի՝ հիշողությունը և անցյալի մասին պատկերացումները կազմում են էթնիկ ընդհանրություն կամ ազգի էթնոպատմությունը: Նաև մեծ նշանակություն ունեն վայրերի, լանդշաֆտների անվանումներ, որոնք ստեղծում են յուրահատուկ «ինքնության քարտեզներ»: Հայրենիքի պատկերացումները, փոխանցվող հենց անվանումների մակարդակով, կարող են փոխանցվել սերնդեսերունդ²:

Հայոց ցեղասպանության հոգեբանական հետևանքների արտացոլումը պատմական հիշողության մեջ նպաստել է խնդրի միջսերնդային փոխանցմանը և հոգեցնցման շարունակությանը: Լ. Պ. Բեպինան գրելով պատմական հիշողության մասին նշել է, որ այն հիմնականում մեկնաբանվում է որպես՝ «մարդկանց կողմից միասնական վերապրված ընդհանուր փորձ» կամ խմբակային հիշողություն: Այն կարող է պարունակել ամեն ինչ՝ սկսած սպոնտան զգայություններից վերջացրած ձևավորված հանրային արարողություններով³: Ընդ որում սա պարզապես անցյալի տվյալների փոխանցման միջոց չէ, այլ անձի, սոցիալական խմբի և առհասարակ հասարակության ինքնաիդենտիֆիկացիայի կարևորագույն բաղադրիչ: Պետք է հաշվի առնել նաև, որ անցյալի փորձն ուղիղ կերպով ներթափանցել է ծնողների դաստիարակման ոլորտ: Փաստորեն, տրավմատիկ հետևանքներն են ստեղծել այն մթնոլորտը, որտեղ մեծացել են երեխաները: Ապագայում նրանց հաջորդող սերունդներն իրենց հերթին նույնականանալով ծնողի կերպարի հետ կերտել են ընտանիքներ, և չնայած այդ դեպքերից ի վեր անցել է

գրեթե հարյուր տարի, սերունդները կրում են իրենց մեջ ցեղասպանության հետևանքները և, ինչպես նաև ցույց են տալիս մեր կողմից իրականացված հետազոտության արդյունքները, այս հանգամանքները նպաստել են խնդրի պահպանմանը ժամանակակից հասարակությունում:

Այդ տրավմատիկ ազդեցությունը դրսևորվում է մինչև իսկ նյարդային համակարգում: ԱՄՆ-ում այս ասպարեզում նշանակալի ներդրում է ունեցել հոգեբույժ Բեսլ վան դեր Կուկը: Նա իր ուսումնասիրությունների մեջ անդրադարձել է հոգեմարմնական փոփոխություններին, որոնք ներառում են նյարդերի և հիպոկամպուս-ամիկտալայի ուղեղային համակարգերը: Իսկ հոգեբանական մակարդակով մարդիկ ստեղծում են տարբեր պաշտպանական մեխանիզմներ. համակերպվում կամ դիմադրում այդ փաստին: Արտահայտվող ախտանշանները տվյալ վիճակին հարմարվելու արտահայտչաձևեր են՝ ենթագիտակցաբար ստեղծվող պաշտպանական միջոցներ: Մարդկային ուղեղը վարժվում է շրջակա միջավայրի թելադրած պայմաններին ներառյալ հոգեցնցմանը և առաջ է բերում պաշտպանական մեխանիզմներ, որոնցից են՝ ժխտումը, արտամղումը, փոխարկումը, ռացիոնալիզացիան, նույնականացումը: Ներկայումս հոգեբուժական ախտաճանաչումը հիմնված է ախտանշանների երեք խմբերի համակցության վրա՝ վերապրում, խուսափում և գերաթնություն-գերլարվածություն: Արտահայտվող ախտանշանները տվյալ վիճակին հարմարվելու արտահայտչաձևեր են՝ ենթագիտակցաբար ստեղծվող պաշտպանական միջոցներ: Մարդկային ուղեղը վարժվում է շրջակա միջավայրի թելադրած պայմաններին ներառյալ հոգեցնցմանը և առաջ է բերում պաշտպանական մեխանիզմներ, որոնցից են՝ ժխտումը, արտամղումը, փոխարկումը, ռացիոնալիզացիան և այլն¹:

Հաջորդ սերունդների հոգեցնցման հետևանքները բացահայտելու համար մեր կողմից իրականացվել է հետազոտություն, որին մասնակցել են տարբեր տարիքի դպրոցականներ (կրտսեր դպրոցական տարիք, դեռահասություն, վաղ պատանեկություն): Դպրոցական տարիքն աշխարհի ճանաչման և արժեքների ձևավորման գլխավոր փուլն է, որի ընթացքում երեխան անցնում է ազգային նույնականացման փուլեր: Շատ կարևոր է հասկանալ վերջիններիս մոտ ցեղասպանության ընկալման առանձնահատկությունները և հաշվի առնել դրանք դաստիարակման գործընթացում: Հետազոտությունն արվել է 6 ուսումնական հաստատություններում՝ ք. Երևանի միջնակարգ դպրոցներում, ՀՀ մարզերում և Երևանի գիշերօթիկ

¹ Ervin Staub "The roots of evil: the origins of genocide and other group violence", Cambridge University Press, 1989.

² Հարություն Մարության. «Հիշողության դերն ազգային ինքնության կառուցվածքում» տեսական հարցադրումներ. – Եր.: «Նորավանք» ԳԴԿ, 2006. – 89 էջ:

³ Репина А. П., Историческая память и современная историография // Новая и новейшая история, 2004. № 5.

¹ Գարագաշեան Մելինե, Ցեղասպանության հոգեցնցումն ու ազգային ինքնությունը:

հաստատություններում: Կիրառվել են հարցման, դիտման և պրոյեկտիվ մեթոդները: Ընդ որում պրոյեկտիվ մեթոդի կիրառումը եղել է տարբեր կրտսեր դպրոցական տարիքի երեխաների համար՝ թուրքի և հայի կերպարների վրա հիմնված նկարի տեսքով, և ազատ շարադրմամբ՝ դեռահասների և ավագ դպրոցականների շրջանակներում:

Կրտսեր դպրոցական տարիքից սկսած (6-11 տարեկան) առկա է ազգային պատկանելիության գիտակցման որոշակի մակարդակ: Կրտսեր դպրոցականը, լսելով ցեղասպանության մասին, առաջնայինը ընկալում է այն սիմվոլիկ՝ տարածական և տեսանելի պատկերների տեսքով. «Թուրքերը գրավել են Արարատ լեռը», «Մենք քարտեզի վրա չենք երևում» և այլն, իսկ պրոյեկտիվ մեթոդիկայի վերլուծության ժամանակ հայի կերպարը հայտնվում էր մեր եռագույնի ներքո: Այս տարիքում հետաքրքիր հանգամանք է երեխայի կողմից տարածքային կորուստների շեշտադրումը՝ անգամ տեղեկատվության բացակայության պարագայում: Կրտսեր դպրոցականները, չհասկանալով «թուր», «Ցեղասպանություն» բառերի բուն իմաստը, ծանոթ չլինելով ջարդերի նկարագրություններին՝ հիմնականում ունենում են ուժեղ հուզական ռեակցիա, որը արտահայտվում է անգիտակցական մակարդակում: Ինչպես նշել է Կ. Գ. Յունգը անձնային անգիտակցականից ավելի խոր մակարդակ է կոլեկտիվ անգիտակցականը, որը ընդգրկում է նախկին սերունդների փորձը: Այն պարունակում է ունիվերսալ էվոլյուցիոն կապեր և կազմում է անձի հիմքը՝ դրսևորվելով արքետիպերի և սիմվոլների մեջ. այն չի հասունանում անհատական մակարդակում, այլ անցնում է մեզ ժառանգաբար¹:

Երեխայի աճին զուգընթաց զարգանում են ոչ միայն վերջինների հոգեկան գործընթացները, այլև մեծանում է տեղեկացվածության մակարդակը: Ի տարբերություն կրտսեր դպրոցականների, դեռահասները հակված են ավելի շատ վերարտադրել իրենց գիտելիքները՝ երբեմն գեղարվեստական մեջբերումներով: Այս տարիքը կարելի է անվանել շատ հակասական: Դեռահասը, մտածողության գործընթացում օրինաչափություններ փնտրելիս, հանգիստ կարող է ընդունել պատահականը՝ որպես ընդհանրական և կոնկրետը՝ որպես արքետիպ²: Մեծամասամբ նրանց կողմից հնչում էին ֆիքսված նախադասություններ, որոնց մեջ թաքնված է վիշտ և տագնապ:

¹ К. Г. Юнг, АРХЕТИП И СИМВОЛ. Издательство "Ренессанс" СП "ИВО-Суд", 1991.

² Абрамова Г. С., Психология Возрастная: Учеб. пособие для студ. вузов. - 4-е изд., стереотип. - М: Издательский центр "Академия", 1999. - 672 стр.

Դրանք նկատելի են նաև ժեստերի, միմիկայի դրսևորումներից: Առկա է նաև զոհերին հերոսացնելու միտում: Որոշ հերոսական օրինակներ, որոնք կապված չէին 20-րդ դարի առաջին կեսի իրադարձությունների հետ, ընդհանրացված և խառնված փաստերի տեսքով տարածվում են ցեղասպանություն հասկացության վրա: Դեռահասների մի մասը (հատկապես մարզերում) բնութագրում էր այն, որպես հերոսական պատերազմ, որտեղ հայերը մեծ թվով զոհեր են տվել: Այս հանգամանքը կարող է բացատրվել ազգի մեծարման և իրականության հերքման չգիտակցված ցանկությամբ, որը բերում է մինչև իսկ տեղեկացվության ծայրահեղ աղճատումների:

Տասնհինգ տարեկանից սկսած անձն արդեն ընդունակ է արքետիպ, ֆորմալ-տրամաբանական մտածողության: Ինչպես նշում է Ջ. Ադելսոնը, կոգնիտիվ զարգացմանը զուգընթաց կարևոր փոփոխություններ են կատարվում նաև քաղաքական մտածողությունների և դատողությունների մեջ¹: Վաղ պատանեկության տարիքը (15-17 տարեկան) առանձնանում է գաղափարական նորամուծություններով, կյանքի փիլիսոփայական իմաստավորմամբ: Պատանու սեփական կարգավիճակի ընդլայնման հետ համատեղ հաստատվում է նաև ազգային կարգավիճակի ընկալումը: Այն դեպքում, երբ դեռահասը կարող է օգտագործել տարբեր պաշտպանական միջոցներ, չհամակերպվել ցեղասպանության փաստին կամ դիտարկել այն, որպես արքետիպ, իրենից հեռու երևույթ, ապա ավագ դպրոցականը ֆորմալ-տրամաբանական օպերացիաների միջոցով ի վիճակի է հստակ նկարագրել պատճառահետևանքային կապերն ու իրեն տեղավորել այդ համակարգում՝ որպես իր ազգի պատմության և մշակույթի կրող: Ավագ դպրոցական տարիքի աշակերտները առաջին հերթին տարբերվում են ձևավորված կարծիքի և մեծ հետաքրքրության առկայությամբ:

Ընդ որում պատանու համար ավելի արժեքավոր են մարդկային կորուստները (69%): Ավագ դպրոցականները կարող են դատել մարդկային արժեքների և արդարության մասին: Այդ հումանիստական գաղափարների հոսքի մեջ հաճախ նաև արդարացվում է ժամանակակից թուրքը, որը, ըստ ավագ դպրոցականներից շատերի, «մեղք չունի իր պապերի չարագործությունների համար»: Բնականաբար, այս ամենի վրա ազդում է նաև ներկայիս հանդուրժողական գաղափարախոսությունները, ուսուցչի դաստիարակչական մեթոդների կիրառումը, ազգային մենթալիտետի ձևավորումը և ընտանիքի սուբյեկտիվ մոտեցումը հարցին և շատ այլ հանգամանքներ, որոնք ենթափանցում են դաստիարակության ոլորտ:

¹ Шестопал Е. Б., Политическая психология. М.: Инфра-М, 2002. - 448 с.

Ինչպես տեսնում ենք երեխայի՝ ցեղասպանության ընկալումները կախված են ոչ միայն նրանց կոգնիտիվ գործընթացներից և ցեղասպանության մասին տեղեկատվության տրամադրումից, այլև սոցիալական միջավայրի ներգործությունից: Դիտարկենք երեխաների ցեղասպանության ընկալումները կախված սոցիալական գործոններից՝ բնակության վայրից, սոցիալական պայմաններից, դաստիարակությունից, կարգավիճակից:

Ցեղասպանության ու թուրքերի մասին մեկնաբանությունները մարզերի դպրոցներում առաջացրին գրեթե համատարած ագրեսիա և բացասական հուզական ֆոն (77% դեռահասների և 83% պատանիների մոտ): Բացի այդ, երևանում ավելի շատ է նկատվում ցեղասպանության փաստի քաղաքականացումը. ավագ դպրոցականների մոտ առկա են արդեն որոշ իմաստով ձևավորված քաղաքական հայացքներ: Նրանց զգալի մասը առաջարկում էին խնդրի լուծման ավելի «քաղաքակիրթ» տարբերակներ, այնինչ Պռոշյան գյուղի և Մեծամոր քաղաքի դպրոցներում ընդհանուր տրամադրվածությունը մարտական և ագրեսիվ էր՝ երբեմն ուղեկցվող ազգային հերոսների, իդեալների շեշտադրմամբ և հույսով ապագայի հանդեպ: Ամբողջովին այլ է պատկերը գիշերօթիկ հաստատություններում, որտեղ նման իդեալները բացակայում են: Այստեղ երեխաների մոտ նկատվում է հակառակ ռեակցիա. ուժեղ ագրեսիա ոչ միայն թուրքերի, այլև սեփական ազգի ներկայացուցիչների նկատմամբ: Գիշերօթիկ հաստատություններում տիրող մթնոլորտը, սիրված, պաշտպանված լինելու պահանջմունքի չբավարարված լինելն է պայմանավորել վերջիններիս միջավայրը: Ըստ «Ասոցիալ ագրեսիայի թեորիայի» երեխայի ագրեսիվ վարքը նախ և առաջ ձևավորվում է մեկ կամ երկու ծնողի հոգ տանելու, քնքության և կապվածության բացակայության դեպքում: Այդ ֆրուստրացիան բերում է երեխայի մոտ մշտական թշնամության զգացողության¹: Գիշերօթիկ հաստատությունների պատանիները, հաճախ նվաստացնում էին սեփական ազգը՝ նշելով, որ հայերն են մեղավոր եղել իրենց կոտորածների համար: Նրանց մեջ մեծ թիվ էին կազմում նաև անտարբեր կամ անտեղյակ պատանիները (մոտ 30%): Դա հասկանալի է վերջիններիս մշտական զոհի կարգավիճակում գտնվելու և իր անցյալը չիմաստավորելու պայմաններում:

Ցեղասպանության փաստի ընկալումը սերտ կապված է նաև երեխաների ընտանիքների անհատական պատմության և արմատների գիտակցության հետ: Ինչպես ասում էր Պռոշյան գյուղի միակ դպրոցի

տնօրենը, երեխաները արմատներով սասունցի են, մեծանում են ազգային դաստիարակությամբ և նվաճողական գաղափարներով, ինչը նկատելի էր վերջիններիս վարքում և դատողություններում: Որոշ պայմաններում ընտանիքի պատմությունը կարող է փոխարինվել այն ազգի ներկայացուցիչների անցյալով, ում հետ անձը նույնանում է:

Փաստորեն, այն սոցիալական միջավայրը և դաստիարակությունը, որի ներքո անցել է երեխայի կյանքը, ազդում է նրա ազգային «ես»-ի ու թշնամու կերպարի ընկալման վրա, որը պետք է դառնա ուսուցիչների, մանկավարժների, հոգեբանների և ծնողների լուրջ դատողությունների առարկա:

Անհրաժեշտ է շեշտը դնել երկու կարևոր խնդրի վրա. մի կողմից առողջ սերունդ դաստիարակելու համար կարիք կա նվազեցնելու սթրեսների հավանականությունը, որոնք առաջ են գալիս որպես ցեղասպանության հետևանք կոլեկտիվ հիշողության, ընտանիքի և ուսուցիչների դաստիարակության արդյունքում: Մյուս կողմից, ցեղասպանության խնդրի մասին ուսուցանումը իրական փաստերի հիման վրա անհրաժեշտ է այդ խնդրի արդիականության պահպանման, զգուշավորության և, վերջապես, ազգային գիտակցության բարձրացման համար: Չնայած, որ դասագրքերի տեղեկատվությունն ամենուր նույն է, այն մատուցվում է տարբեր կերպ. ուսուցիչները իրենց սուբյեկտիվ շեշտադրումներով ներազդում են երեխայի ընկալման վրա: Այս փաստն ակնհայտ երևում է ընդհանուր ազգային մտածողության համատեքստում և խիստ տարբերվում է երևանի ու մարզերի դպրոցներում:

Հենց ներկայիս դպրոցականներն են լինելու երկրի ապագան և ցեղասպանության ընդունման պահանջատերը: Ե՛հ չտ մշակված ու համակարգված ուսուցման մեթոդները կարող են հանդիսանալ գալիք սերունդները միավորող կարևոր նախադրյալ, որը կլինի ոչ թե հիմնված զոհի կերպարի պահպանման, այլ առողջ և մարտունակ հասարակության կերտման վրա:

¹ Агрессия у детей и подростков: Учебное пособие/Под ред. Н. М. Платонова.:- СПб.: Речь, 2006.-336 с.

ОСОБЕННОСТИ ВОСПРИЯТИЯ ГЕНОЦИДА АРМЯН В ШКОЛЬНОМ ВОЗРАСТЕ

Геноцид армян оставил неизгладимый след и глубокие психологические последствия на весь армянский народ благодаря отражению этого факта в исторической памяти, что способствовало его межпотомственной передаче. До сих пор представители армянского народа испытывают травматические последствия геноцида с детского возраста, что мы наблюдаем в результате проведенных нами исследований. Очень важно обращать внимание на возрастные особенности детей, а так же знать, что восприятия геноцида зависят не только от когнитивных процессов школьника, от представления информации о геноциде, но и от влияния социальной среды. Подобные исследования ставят цель выявить особенности восприятия школьниками факта геноцида и их использования в области образования.

Nelly Vardanyan

THE SPECIFICS OF PERCEPTION OF THE FACT OF ARMENIAN GENOCIDE AMONG SCHOOL AGE STUDENTS

Genocide has left indelible traces and deep psychological impact on the whole Armenian nation. The reflection of that fact in the historical –genetic memory contributed to its inter-generational transfer. Still, after so many years have passed, the Armenian nation carries its traumatic effects since childhood, and it is noted especially in the results of our research with school-age students. It is important to pay attention to the children's age peculiarities. The perception of the Genocide depends not only on the students cognitive processes and informational provision to them, but also on the impact of the social environment. This research aims to find out the peculiarities of children's perception of Genocide and apply them in the educational field.